Ծուշանիկ Կուրղինյան

Նամակ Գարեգին Լևոնյանին 2

17 մարտի, 1916 թ.
Խարկով
Հարգելի պ. Գ. Լևոնյան

Ափսոս, որ մոռացել էի. «Միտինգը» լույս է տեսել մի թերթում, «Ո՞ւմ ինչը» անտիպ է:

Վերջին ուղարկածներս էլ այժմ ինձ տաղտկալի են երևում: Ուղարկում եմ նորերը: Վարվեցեք ըստ ձեր հայեցողության:

Ինչպես կտեսնեք, կա և թուրքահայ բարբառով: Թե ինչո՞ւ. այնպես: Այդ բարբառը խիստ ճկուն է և իրեն հատուկ բառերով ու հոլովներով նպաստավոր սիրուն հանգեր շարահյուսելու. միայն ա՛յս:

Գրել եք. «Բարևիր ինձ չճանաչող զավակներիդ»:

Զավակներս ձեզ ճանաչում են. մեծ հաճույքով թերթում «Գեղարվեստը» և զարմանում, որ ամիսը մի անգամ լույս չի տեսնում, հայ իրականությունը նրանց դեռ անծանոթ է. . .

Զավակներս ձեզ հարգում են, որպես եզակի մի մարդու, որ առաջինն ու վերջինն է գրեթե, ով հարգել է իրենց մոր աղքատիկ երգը, անշահ ցանկություններով նեցուկ դառնալ համեստ փորտի անվստահ քայլին:

Հիշո՞ւմ եք, գուցե շատ է անցել, օրերի ու տարիների մի երկար շարան: Ես այժմ էլ տեսնում եմ ձեր ժպտուն դեմքը, լսում ձեր ձայնը . «Քաջ կացեք, շատ կարդացեք, գրեցեք և գրեցեք, ձեր մեջ ես տեսնում եմ բանաստեղծական կայծ . . . » և այլն, և այլն:

Եվ տարիներով գուրգուրած երազս իրականացրիք—երգս տպված էր «Տարազում»:

Պատահում են դեմքեր, դեպքեր, որ չեն մոռացվում բնավ, հենց այդ պատճառով էլ երեխաներս գիտեն, թե ով է Գ. Լևոնյանը . . .

Ընդունեցեք Արշակ, Շավարշ, Արշականուշ և Արշամիկ Կուրղինյանների ջերմագին ողջույնները:

Ձեր՝ Շ. Կուրղինյան